

# Չ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Նախորդ ամսոյ 12 թուականաւ շրջաբերական գրով ժը յանձնարարած էինք ձեզ որ հայ տառերու գիւտին 1500 ամեակին և տպագրութեան 400 ամեակին առթիւ փոյթ և հոգածութիւն չխնայէք կազմակերպելու հոկտ. 13ի կիրակի օր, վայելուչ հանդէսներ, արժանապէս սօնելու համար սահմանուած Յորելեանի հանդէսը:

Ազգ կեդր. վարչութեան Սառն Ժողովոյ որոշմամբ այս անգամ ի մէջ այլոց որոշուած է.

Ա. Հոկտ. 12ի շաբաթ օրը այդ ազգային պատմական հանդէսին առթիւ փակ պահել Ազգ. Պատրիարքարանն ու բոլոր հայ վարժարանները:

Բ. Նկատի առնելով այս Յորելեանի հանդէսին պատմական լուրջ հանգամանքը, և մայրաքաղաքիս արդի պայմանները, յանձնարարել որ այս առթիւ գիշերային հանդէսներ չկատարուին Ս. Եկեղեցեաց մէջ, և զգուշութիւն ըլլայ չափազանցութիւններէ:

Հետեւաբար, ներկայ շրջաբերական գրովս, ինչպէս մայրաքաղաքիս միւթագ. խորհրդոց, նոյնպէս և ձեզ ծանուցանելով այս տնօրէնութիւնները, կը յանձնարարենք ըստ այնմ ի գործ դնել պարտ ու պատշաճը, և կարելոր գեղուցումը ընել որոց որ անկ է:

Մնամք աղօթարար  
Պատրիարքական Տեղապահ  
ԳԱՐՐԻԷԼ ԵՊՍԿ. ՃԵՎԱՀԻՐ ՃԵԱՆ

# Բ. Չ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Հայ տառերու գիւտին 1500 ամեակին և տպագրութեան 400 ամեակին առթիւ Ազգ. Կեդր. վարչութեան խառն ժողովոյ որոշմամբ արժան դաստուած է ամսոյս 12ի շաբաթ օր Մայր Եկեղեցին յատուկ Ս. Պատարագ մատուցանել և Յորելեանի հանդէս վը կատարել:

Այս հանդէսին մէջ հարկ դատուելով որ բարձրագոյն ազգ. և թէ մասնաւոր հայ վարժարաններէ երկսեռ վեցական աշակերտ ներկայ գտնուին, կը յանձնարարենք որ նոյն օրը ժամը 9ին (Ը. Ե.) վարժարանի աշակերտներէն որոշեալ թուով վեց աշակերտ գտնուին Մայր Եկեղեցի, առաջնորդութեամբ վարժարանի տեսչին:

Մնամ Աղօթարար

Պատրիարքական Տեղապահ

ԳԱԲՐԻԷԼ ԵՊՍ. ՃԵՎՈՂԻՐ ՃԵՍՆ